ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի, ժամը 12:00-ի ընդլայնված նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսյանի «Արդի հայերենի իրավաբանական տերմինները»** մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հեղինակի աշխատանքը առաջին լուրջ փորձն է Հայաստանի Հանրապետության ներկայիս օրենսդրության և առհասարակ իրավաբանական պաշտոնական փաստաթղթերի բառապաշարի արժևորման և գիտական շրջանառության մեջ դնելու բնագավառում: Արծարծված թեման արդիաշունչ է՝ պայմանավորված հայերենի իրավական լեզվի բառապաշարի անհրաժեշտությամբ: Հեղինակը գիտական բարեխղճությամբ և մեծ պատասխանատվությամբ է հետազոտել արդի հայերենի իրավաեզրահամակարգը՝ ենթարկելով այն ստուգաբանական, իմաստագործառական, շերտաբանական և բառակազմական քննության: Աշխատության կառուցվածքը պայմանավորված է լեզվաբանության մեջ մշակված մոտեցումներով: Այն բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հեղինակը հարուստ լեզվանյութի ուսումնասիրությամբ ուշագրավ դիտարկումներ է կատարել, գիտականորեն խորաշերտ վերլուծությունների միջոցով հանգել կշռադատված եզրակացությունների: Աշխատանքը տեսական դրույթների և դրանք հավաստող օրինակների, մեջբերումների հաջողված համակցություն է: Մենագրության ընձեռած հնարավորությունները կարող են մեծապես գործածվել նոր իրավաեզրաբանական վերլուծական աշխատություններում, գիտական հոդվածներում, ինչպես և կարող են այդ հնարավորություններից շահեկանորեն օգտվել մասնագիտական բառարաններ կազմողները: Աշխատանքից որոշ բաժիններ՝ առանձնացված հատուկ նպատակադրվածությամբ, կարող են ընդգրկվել մասնագիտական ֆակուլտետներում կարդացվող դասախոսություններում:

Մենագրության վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Մ.Ա.Սարգսյան՝ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2) Լ.Ա.Ղամոյան՝ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու:

3) Զ.Ա.Երվանդյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված մենագրությունը համապատասխանում է գիտական աշխատանքի համար պահանջվող բոլոր չափանիշներին և ունի գիտական լուրջ արժեք: Կառուցվածքային և բովանդակային բնույթով այն կարող է օգտակար լինել ինչպես այլ գիտությունների եզրաբառերի պաշարը ուսումնասիրողների, այնպես էլ հայ իրավական լեզվի բառապաշարը հետազոտող մասնագետների համար: Հետազոտության որոշ դրույթներ կարող են հաշվի առնվել իրավական ակտերի նախագծեր կազմելիս:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի «Արդի հայերենի իրավաբանական տերմինները»** մենագրությունը երաշխավորել հրատարակության՝ հեղինակի միջոցներով, 100 օրինակ տպաքանակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան